Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

viewpoint

Տեսակետ

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանություն. Հեղինակների գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններ

Հեղինակ՝ Մարինե Ֆիդանյան

Տպագրված է

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի

կողմից

Սայաթ Նովա 19,

Երևան 375001

Հեռ./Ֆաքս՝ (374 2) 582638

Էլ.փոստ՝ mail@ICHD.org

http://www.ICHD.org

1. Ներածություն

Մարդկության զարգացման հայտնի բոլոր փուլերը արվեստի տարբեր արտահայտչամիջոցների՝ ժայռապատկերների, բանավոր խոսքի, երգի, պարի, խեցեգործության շնորհիվ հասել են մեզ:

Արվեստ, մշակույթ, ազգ, պետություն… այս հասկացությունների անմիջական փոխկապակցվածության արդյունքում է բնորոշվում և զանազանվում յուրաքանչյուր ազգի առանձնահատկություններն ու ունակությունները, ինչն էլ իր հերթին հանդիսանում է տվյալ երկրի հարատևության գրավականը և միջազգային դաշտում զարգացած պետությունների շարքին դասվելու երաշխիքը:

Հետևաբար, տվյալ երկրում արվեստի նկատմամբ պետական հոգածության դրսևորման և հեղինակների իրավունքների պաշտպանության մեխանիզմների մշակման ու բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների կազմակերպման դերն ու նշանակությունը անվիճելի են:

Այս աշխատանքի նպատակն է վերծանել - Հայաստանում գրականության, գիտության և արվեստի բնագավառներում ստեղծագործող անձանց՝ հեղինակների անձնական և գույքային իրավունքների պաշտպանության և գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների գործառույթներն ու համապատասխան գործընթացը իրականացնելու հիմքերը:

2. ՀՀ Կառավարության 2008 թ. ծրագիրը և մտավոր սեփականության խնդիրները

Ընդհանուր առմամբ, մտավոր սեփականության ոլորտը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերով: մտավոր սեփականության ոլորտը ստորաբաժանվում է երկու հիմնական ուղղություններ՝

- արդյունաբերական սեփականություն,
- հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ:

2008թ. ՀՀ Կառավարության ծրագիրը ընդգրկում է այս կարևորագույն ոլորտը և «Կառավարության հիմնական ուղղությունները» մասում, 4.3.6. «Հեղինակային և գույքային իրավունքներ» կետով անդրադառնում ոլորտի հիմնախնդիրներին: Ծրագրի այս հատվածի համար կարող ենք առանձնացնել հետևյալ դիտարկումները.

Առաջին.

«Հեղինակային և գույքային իրավունքներ» վերնագրի ներքո ենթադրվում է, որ խոսքը պետք է լինի հեղինակների գույքային իրավունքների մասին, բայց հեղինակների գույքային իրավունքները և անշարժ գույքի հանդեպ ծագած իրավունքները ներկայացվում են միասին՝ մի վերնագրի ներքո:

Կարծում ենք՝ ի սկզբանե կարևոր է տարանջատել այս երկու ոլորտների հիմնահարցերը, քանի դեռ նշված երկու տիպի իրավունքները տարբեր մոտեցումներ են պահանջում և - հիմնովին տարբեր են միմյանցից:

Երկրորդ.

Ծրագրի 4.3.6 կետի առաջին և երկրորդ ենթակետերում խոսվում է «գյուտարարների և - կազմակերպությունների համապատասխան իրավունքների գրանցման» մասին, քանի դեռ գյուտերը և, հետևաբար, գյուտարարների իրավունքները պաշտպանվում են ոչ թե հեղինակային իրավունքը կարգավորող օրենսդրությամբ /ինչը ենթադրվում է վերնագրից/, այլ գյուտերի գրանցման և համապատասխան իրավունքների պաշտպանությունը կարգավորող օրենքով և այլ ենթաօրենսդրական ակտերով, ինչն էլ իր հերթին մտավոր սեփականության ոլորտի մի մասն է կազմում:

Երրորդ.

ՀՀ Կառավարության ծրագրի 4.3.6 կետի 6-րդ ենթակետով ներկայացվում է անշարժ գույքի միասնական կադաստրի վարման և անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների իրականացման հիմնախնդիրները:

Հաշվի առնելով վերոնշյալ դրտարկումները՝ կարևոր է նշել, որ հեղինակային իրավունքն ուղղված է մտավոր աշխատանքի արդյունքում ստեղծված ստեղծագործությունների/գործերի և հեղինակի՝ իր ստեղծագործությունների հանդեպ բացառիկ իրավունքների պաշտպանության իրականացմանը, ինչը որևէ ընդհանրություն չունի սեփականության ոլորտի իրավունքների՝ անշարժ գույքի գրանցման, տիրապետման և օգտագործման հետ:

Հետևաբար, առաջարկվում է.

- ի սկզբանե տարանջատել հեղինակների և գյուտարարների իրավունքներին վերաբերող հիմնախնդիրները այլ ոլորտների հիմնահարցերից,
- ներկայացնել առանձին վերնագրի ներքո, այն է՝ «Մտավոր սեփականության ոլորտի իրավունքներ»,
- այնուհանդերձ անդրադառնալ և՛ արդյունաբերական սեփականության, և՛ հեղինակային ու հարակից իրավունքներին վերաբերող խնդիրներին:

3. Օրենսդրությունը

Հեղինակային իրավունքը կարգավորվում է ՀՀ Հեղինակային Իրավունքի և Հարակից իրավունքների մասին օրենքով, ընդունված 2006, հունիսի 15-ին /այսուհետ՝ Հեղինակային Օրենք/: Մի կողմից այն կանոնակարգում է հեղինակների և այլ անձանց միջև ծագած իրավահարաբերությունները՝ ստեղծագործության օգտագործման համար հեղինակի վարձատրություն ստանալու իրավունքը, մյուս կողմից՝ հաշվի առնելով հասարակության բոլոր անդամների շահերը, սահմանում է անվճար օգտագործման դեպքերը[1] առանց հեղինակի թույլտվության և վարձատրության:

Ամեն օր ռադիո և հեռուստատեսային եթերից, ռեստորաններում, բացօթյա սրճարաններում հնչում են բազմաթիվ երգեր, թատրոններում՝ ներկայացումներ, կազմակերպվում համերգներ, փառատոներ, ուր հնչում են տարբեր ժանրերի ստեղծագործություններ: Հեղինակային Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ցանկացած տեսակի օգտագործման[2] համար երգի կամ որևէ այլ ստեղծագործության հեղինակը պետք է վարձատրվի: Դա հեղինակի «աշխատավարձն» է, քանի որ ստեղծագործող անհատի «աշխատանքը» տարբերվում է սովորական աշխատավորների կատարած ամենօրյա աշխատանքից:

Արտաքին տեսքից օրենսդիրը կարգավորում է այս ոլորտի իրավահարաբերությունները համապատասխան դրույթներ սահմանելով, սակայն իրականում հեղինակները բազմաթիվ խոչընդոտներ են ունենում սեփական իրավունքների իրականացման գործում:

[1] օրինակ՝ քաղվածքների օգտագործումը, կրթական նպատակներով գրականության օգտագործումը և այլն: /տես՝ ՀՀ Հեղինակային Օրենք, Հոդված 22,23,24,25,26,36/

[2] օրինակ՝ ստեղծագործության հիապարակային կատարում, վերարտադրում, հեռարձակում, տարածում, թարգմանություն և այլն: /տես՝ ՀՀ Հեղինակային Օրենք, Հոդված 13/

Հեղինակ – Օգտագործող իրավահարաբերությունները կիրարկելի են երկու եղանակներով՝

1. անհատական /պայմանագրային/,
2. կոլեկտիվ հիմունքներով:

Ստեղծագործությունն օգտագործելու թույլտվության և, հետևաբար, վարձատրվելու համար, Հեղինակի և Օգտագործողի միջև կնքվում է պայմանագիր: Սա հեղինակների գույքային իրավունքների անհատական կերպով իրականացնելու տարբերակն է: Այն դեպքերում, երբ վերահսկումը անհնար է կամ դժվար, հեղինակների գույքային իրավունքները իրականացվում են միայն հեղինակների գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների միջոցով:

4. Կոլեկտիվ հիմունքներով Հեղինակների գույքային իրավունքների իրականացման կազմակերպություններ

Գովելի է այն փաստը, որ ՀՀ Կառավարության 2008թ. ծրագրի 4.3.6. Հեղինակային և - գույքային իրավունքներ կետի 4-րդ ենթակետով նշվում է Կոլեկտիվ Հիմունքներով կառավարող կազմակեպությունների գործունեության հիմնական սկզբունքների կարևորությունը: Հետևաբար, կարևոր է կազմակերպել և նպատակային քայլեր ձեռնարկել այս կարևորագույն խնդիրը լուծելու ուղղությամբ:

Այս կազմակերպությունները ստեղծվում են հեղինակների կողմից և հանդես են գալիս որպես միջանկյալ օղակ հեղինակների և օգտագործողների միջև, որոնց հիմնական գործառույթներն են՝ օգտագործողների հետ հեղինակներից ստացված լիազորությունների հիման վրա՝

- պայմանագրերի կնքում,
- գումարների գանձում,
- բաշխում:

Աշխատելաոճի հիմնական սկզբունքներն են՝

- թափանցիկություն,
- անկողմնակալություն:

Կազմակերպությունները նաև կնքում են փոխադարձ պայմանագրեր արտասահմանյան երկրներում գործող նմանատիպ կազմակերպությունների հետ՝ տրամադրելով իրենց երկրում օտարերկրյա հեղինակներին ազգային պաշտպանություն, ինչը ՀՀ ստանձնել է՝ համապատասխան միջազգային պայմանագրերը վավերացնելով:

ՀՀ Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքի 63-րդ և 64-րդ - հոդվածները կարգավորում են նման կազմակերությունների գործունեությունը և սահմանում համապատասխան գործառույթները:

Առայժմ ՀՀ տարածքում գործող նման կազմակեպություններից է «ՀայՀեղինակ» կազմակեպությունը, որը հավաքագրում և բաշխում է հեղինակներին յուրաքանչյուր ամսվա ընթացքում օգտագործված գործերի համար գամձած գումարը:

Այսպիսով, շատ կարևոր է անհապաղ հետևողական քարոզչություն նախաձեռնել հասարակության իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ: Հեղինակային իրավունքի բոլոր տեսակի խախտումները օրենքով հետապնդվում են, և անտեղյակությունը չի ազատում իրավախախտներին պատասխանատվություն կրելուց:

4.1. վերահսկում

Փաստորեն Հայաստանն ունի օրենք, որը կարգավորում է սույն իրավահարաբերությունները, բայց իրականում հեղինակային և հարակից իրավունքները խախտվում են ամենուր: Ի՞նչն է պատճառը:

Վերջերս հեղինակների կողմից անընդմեջ բարձրաձայնած բողոքները վերաբերում են և՛ ստեղծագործությունների անօրինական օգտագործման դեպքերին /առանց հեղինակի թույլատրության/, և՛ ստացված գումարների շատ ցածր լինելու փաստին: Գանձված և հետագայում հեղինակին փոխանցված չնչին գումարները խոսում են այն մասին, որ տվյալ կազմակերպությունը ինչ-ինչ պատճառներով դժվարություններ ունի այդ գործընթացը կազմակերպելու հարցում և ի վերջո չի արդարացնում հեղինակների սպասելիքները:

Ըստ Հեղինակային Օրենքի 63.1 հոդվածի՝ յուրաքանչյուր տիպի իրավունքների համար չի կարող ստեղծվել մեկից ավելի կազմակեր-

պություն: Այսպիսով, օրենսդիրը, սահմանելով հեղինակների գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների գործունեությանը վերաբերող համապատասխան դրույթները, թերացել է փաստացի մոնոպոլ կարգավիճակում գտնվող կազմակերպության վերահսկման գործընթացը կարգավորելու գործում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն հեղինակների գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների վերահսկման տարբեր մոդելներ:

Յուրաքանչյուր մոդել ունի իր երկրի օրենսդրությանը համապատասխանող առանձնահատկություն: Վերահսկումը կատարվում է կամ հակամրցակցային օրենսդրության միջոցով, կամ մշտական գործող հատուկ վերահսկիչ մարմնի կողմից: Սա արդեն առանձին հետազոտության թեմա է, ինչը, սակայն, անհրաժեշտ է կազմակերպել՝ ՀՀ տարածքում ամենահարմար մոդելը կիրառելու նպատակով:

Նման կազմակերպությունների վերահսկումը իրականացնելով և՛ օգտագործողները, և՛ - հեղինակները հավասարապես պաշտպանված կզգան իրենց և արդյունքն էլ զգալի կլինի: Ըստ այդմ.

- օգտագործողները վստահաբար կամայական և "ընտրովի" գանձումների օբյեկտներ չեն լինի, այսինքն ստեղծագործության որոշակի օգտագործման համար բոլոր օգտագործողները կվճարեն նույն չափով,
- հեղինակները արդարացիորեն կստանան իրենց հասանելիք գումարները:

4.2. Հնարավոր չարաշահումները

"Չվերահսկվող" կազմակերպության գործունեության ընթացքում կարող են դիտարկվել հետևյալ չարաշահումներն ու խախտումները, մասնավորապես՝

- արդյո՞ք տվյալ կազմակերպության աշխատակիցների կողմից օգտագործողից պահանջվում է յուրաքանչյուր ամսվա համար ճշգրիտ լրացված օգտագործված ստեղծագործությունների ներկայացված ցանկը,
- արդյո՞ք օգտագործողի կողմից ներկայացված ցանկը ստուգելու և համեմատելու նպատակով իրականացվում է ռադիո և - հեռուստաեթերի մոնիթորինգ,
- արդյո՞ք կազմակերպությունը պայմանագրեր է կնքելև կնքում ՀՀ տարածքում գործող բոլոր տեսակի օգտագործողների հետ հավասար հիմունքներով,
- արդյո՞ք ՀՀ տարածքում կազմակերպվող բոլոր համերգներից է գանձվում հեղինակային հոնորարը,
- արդյո՞ք դահլիճ տրամադրող կազմակերպությունը պարտավորություն է կրում զգուշացնելու համերգի կազմակերպչին հեղինակային հոնորարի մասին և կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությանը տվյալներ տրամադրում համերգի կազմակերպչի մասին,
- արդյո՞ք կազմակերպությունը գանձումներ է կատարում միայն մեկ կատեգորիայի իրավունքների համար, թե նաև ուրիշ իրավունքների համար,
- արդյո՞ք տարբեր օգտագործողների հետ կնքված պայմանագրերի ֆիքսված գումարները չեն խախտում ՀՀ Կառավարության որոշման նվազագույն դրույքաչափերը, այսինքն ավելի քիչ չեն սահմանված դրույքաչափերից,
- արդյո՞ք վաճառված տոմսերից ներկայացված գումարները ճշգրիտ են, որովհետև կազմակերպությունը հնարավորություն չունի ստուգելու ներկայացված գումարի չափը Հարկային մարմիններ ներկայացված գումարների հետ,
- արդյո՞ք կամայական մոտեցում չի ցուցաբերվում հենց կազմակերպության կողմից օգտագործողների հանդեպ,
- արդյո՞ք կազմակերպությունը, լինելով միակը ՀՀ տարածքում, իրավասու է գանձել ոչ իր կազմակերպության անդամների գումարները և գանձելուց հետո պարտադրել, որ հեղինակը դառնա իր կազմակերպության անդամը, որից հետո միայն գումարը կփոխանցվի հեղինակին,
- արդյո՞ք կազմակերությունն ունի համապատասխան մարդկային ռեսուրսներ /տեսուչներ/ գործընթացը իրականացնելու համար,
- արդյո՞ք առ այսօր օտար երկրներում նմանատիպ կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն ՀՀ տարածքում այդ կազմակերությունների անդամ-հեղինակների գործերի օգտագործման համար կատարվել են փոխանցումներ, ինչը մեծ նշանակություն ունի մեր երկրում հեղինակների իրավունքների պաշտպանության "վարկանիշի" ձևավորման հարցում:

Այսպիսով, հեղինակների իրավունքների պաշտպանությունն իրագործելու համար անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ կատարել և համապատասխան մեխանիզմներ մշակել հեղինակների գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարելու ուղղությամբ:

5. Մեկ կազմակերպություն, թե՞...

5.1 Օրենսդիրը սահմանում է, որ տարբեր տիպի իրավունքների իրականացումը պետք է կատարվի տարբեր կազմակերպությունների կողմից: /Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենք, հոդված 63.1/ Սակայն տարբեր հոդվածներում թվարկված իրավունքների կատեգորիաները տարբերվում են և շփոթություն են առաջացնում:

Ընդհանուր առմամբ կան այնպիսի իրավունքներ, որոնց իրականացումը կատարվում է միայն նշված կազմակերպությունների կողմից: Դրանք են՝

- ռեպրոգրաֆիական վերարտադրության,
- փոխատվության,
- վարձույթով տալու,
- ստեղծագործությունների մասնավոր արտատպման իրավունքները:

Մասնավոր արտատպման իրավունքները որպես կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպության առանձին տեսակ ընդհանրապես նշված չէ ՀՀ Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքում, իսկ մնացած վերոնշյալ իրավունքները հստակ չեն: Վերջինիս դեպքում հեղինակային հոնորարը վճարվում է համապատասխան սարքավորումներ ՀՀ տարածք ներմուծող կազմակերպության կողմից /այն սարքավորումների համար, որոնց միջոցով կարելի է ստանալ ստեղծագործության օրինակը /: Հետևաբար, անհրաժեշտ են օրենսդրական համապատասխան փոփոխություններ:

5.2 Այսպիսով, առաջանում է մեկ այլ հարց, թե արդյո՞ք նպատակահարմար է կամ արդարացված այդքան կազմակերպությունների առկայությունը Հայաստանի նման փոքրաթիվ բնակչություն և, հետևաբար, քիչ հեղինակներ ունեցող երկրում: Օրինակ, շատ երգիչներ մեր երկրում իրենց իսկ երգերի կատարողներն են հանդիսանում: Ստացվում է, որ մեկ հեղինակը պետք է առնվազն երկու առանձին կազմակերպությունների անդամ լինի, ինչն էլ ավելի կբարդացնի թղթաբանական հարցերը, և արդյունքում թե՛ օգտագործողները, թե՛ հեղինակները բյուրոկրատական քաշքշուկի մեջ կընկնեն:

Միջազգային ասպարեզում գործում են տարբեր տիպի կազմակերպություններ՝ տարբեր իրավունքներ իրականացնելու կենտրոնացված տարբերակով: Սա նույնպես առանձին ուսումնասիրության առարկա է հանդիսանում, ինչը ևս կարևոր է մեր երկրի համար:

6. Նպատակները

Այս հարցի լուծման համար պետության հոգածությունը և անհապաղ միջամտությունը արդարացված է մի շարք գործոններով.

- հեղինակների՝ օրենքով սահմանված, արդարացի վարձատրություն ստանալու իրավունքի կիրարկում, ինչը կնպաստի ապագայում կենսաթոշակների ապահովմանը,
- միաժամանակ և հեղինակների, և օգտագործողների իրավունքների ու շահերի պաշտպանություն,
- հեղինակ - օգտագործող հարաբերությունների փոխվստահության ձևավորում,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարում,
- հարկերի վճարման աճի ապահովում,
- բյուջեի ավելացում,
- անօրինական “պիրատական” արտադրության զգալի կրճատում և, հետևաբար, մասնակի վերացում,
- արվեստագետների արտահոսքի կանխում,
- Հայաստանի հանդեպ միջազգային հանրության վստահության բարձրացում:

7. Առաջարկություններ

Հասարակության լիարժեք անդամ լինելու զգացողությունը յուրաքանչյուր քաղաքացու համար անհրաժեշտ մի գործոն է, ինչը պայմանավորված է պետության կողմից իրավունքների պաշտպանությանն ուղղված համապատասխան քայլեր ձեռնարկելուն:

Հետևաբար 6-րդ կետում նշված նպատակներն իրականացնելու համար առաջարկվում է՝

- կազմակերպել իրազեկման քարոզարշավ,
- ստեղծել առանձին հեղինակային իրավունքի վեբ-կայք ,
- ստեղծել վերը նշված հարցերի շրջանակներում վերլուծող և եզրահանգումներ կատարող աշխատանքային խումբ,
- քայլեր ձեռնարկել առանձին պետական վերադաս մարմին ստեղծելու ուղղությամբ, որն էլ կվերահսկի կազմակերպությունների գործունեությունը,
- օրենսդրական լրացումներ և/կամ փոփոխություններ ներկայացնել,
- կազմակերպել քննարկումներ, կլոր սեղաններ վերոհիշյալ թեմայի շուրջ,
- խթանել օրենքով սահմանված այլ իրավունքների իրականացման կազմակերպությունների ստեղծումը:

8. Վերջաբան

Այսպիսով, մտավոր սեփականության, մասնավորապես հեղինակային իրավունքների պաշտպանությունը լուրջ և անհետաձգելի մոտեցում է պահանջում: Անհրաժեշտ է կարճ ժամանակահատվածում կոնկրետ քայլեր ձեռնարկել այս կարևոր և արդի խնդրի լուծման գործընթացը խթանելու ուղղությամբ՝ ներգրավելով հասարակության հնարավորինս լայն շրջանակներ:

Հատկանշական է, որ մտավոր սեփականության հիմնախնդիրները առնչվում են ՀՀ - Կառավարության գործունեության հիմնական գերակայությունների ցանկի գրեթե բոլոր կետերի հետ, ինչը ենթադրում է, որ Հեղինակների և այլ իրավատերերի իրավունքների լիարժեք պաշտպանությունը ի սկզբանե իրականանալի է:

Արվեստի մարդիկ իրենց խառնվածքով, մտածելակերպով, ապրելակերպով, զգացմունքայնությամբ առանձնանում են հասարակության հիմնական զանգվածից: Նրանք ստեղծում են ազգային արժեքներ, որոնք հարատև են և - հանդիսանում են մեր ազգի և պետության կայունության գրավականը: Ուստի պետական հոգածությունը հեղինակների իրավունքների պաշտպանության գործում պայմանավորված է և, միաժամանակ, թելադրված պատմականորեն: Հեղինակների իրավունքների պաշտպանությունը և գույքային իրավունքների ճիշտ կազմակերպումը կնպաստի մեր երկրում ոչ միայն աղքատության նվազեցմանը, այլ նաև տնտեսական աճի ապահովմանը, ինչը պայմանավորված է Հեղինակների գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների դերի և նշանակության բարձրացմամբ:

Կազմակերպելով տարբեր միջոցառումներ ստեղծված իրավիճակը շտկելու, բարձրացված հարցերին պատասխաններ գտնելու և - մեր իրականությանը համապատասխանեցնելու ուղղությամբ, ՀՀ Կառավարությունը մեծ քայլ կկատարի դեպի առողջ հասարակության ձևավորումը, կենսամակարդակի բարելավումը, պետության հանդեպ շարքային քաղաքացու վստահության բարձրացումը, ինչպես նաև կնպաստի օտարերկրյա ներդրումների աճին: